

ՀԱՐԱՏՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՑՈՒՄԸ

Հարստութիւնդ, եթէ Աստուծմէ առի՛ր, վստահ եղի՛ր եւ հաւատա՛, որ գաւակիդ կրկին առատութեամբ կու տայ եթէ ուզես: Պիտի ըսես, ինչպէ՞ս եթէ ուզեմ: Ինչ, որ Աստուծմէ պարգեւ առիր եւ ունիս դարձեալ Աստուծոյ պարգեւէ, իսկ գաւակիդ բարեպաշտութեանդ օրինակը ձգէ եւ ոչ թէ Հարստութիւնդ: Աղքատներու երամին ըրած գթութեանդ անոր վերակացու ձգէ Աստուծոյ անսահման գթութիւնը եւ ոչ թէ փայլուն ոսկին: Սորվեցո՛ւր ողորմութեան բարիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը: Սորվեցո՛ւր գԱստուած պաշտել եւ ոչ թէ մամոնան: Սորվեցո՛ւր երկնաւոր բաներու ցանկալ եւ ոչ թէ երկրաւորներուն: Վարժեցո՛ւր պատւասէր ըլլալ երկնային պատիւին եւ ոչ թէ մեր սին կեանքի ծաղկաթափ փառքին: Սորվեցո՛ւր սիրել ոչ թէ առօրեայ կեանքը՝ անցաւորը, որ յի է դառնութեամբ, թշուառութեամբ, այլ՝ կայունը, մնայունը եւ բիւրապատիկ հանգիստով լեցուն: Իսկ եթէ անիրաւութենէ, զրկանքներէ հաւաքած հարրատութիւնդ գաւակներուդ պիտի թողուս, զիտցի՛ր եւ հաւատա՛, թէ ուր որ անիրաւութիւն եւ զրկանք կայ, հոն Աստուծոյ բարկութիւնը կը գտնուի: **Սարգիս Շնորհալի (Յորդորակներ)**

ԵՐԲ ԻՆՔՉԻՆՔԴ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՒԶԵՍ ՅԱՆՁՆԵԼ, Կարդա՛ Սաղմոս 37
+++++

Սիրտդ մի՛ նեղեր չարերուն համար, ո՛չ ալ նախանձե անօրէն մարդոց: Որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս, պիտի չորնան այնպէս՝ ինչպէս դալար բոյսը կը չորնայ: Տիրոջ վստահե՛ եւ բարիք ըրէ, որպէսզի երկրի վրայ ապրիս եւ ապահովութիւն վայելես: Միակ ուրախութիւնդ Տէ՛րը թող ըլլայ, եւ ինք սիրտիդ բոլոր բաղձանքները պիտի տայ: Քու կեանքդ Տիրոջ յանձնէ, եւ վստահ եղիր, ան ամէն ինչ պիտի տնօրինէ: Յերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ, իրաւունքդ՝ կէսօրուան արեւուն պէս: Լուրթեամբ հնազանդէ՛ Տիրոջ, սիրտդ մի նեղեր անոնց համար՝ որ անիրաւ յաջողութեան կը հասնին, եւ անոնց համար՝ որոնք չարիք կը սիրեն: Չսպէ՛ բարկութիւնդ, մէկ կողմ դիր գայրոյթդ, սիրտդ մի՛ նեղեր, որպէսզի դու ալ չարիք չգործես: Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին, միևնչեռ Տիրոջ վստահողները երկիրը պիտի ժառանգեն: Ժամանակ մը ետք՝ ամբարիշտը ա՛լ գոյութիւն պիտի չունենայ, ըրքան ալ փնտռես՝ անոր հետքն իսկ պիտի չգտնես: Բայց հեզերը պիտի ժառանգեն երկիրը, եւ կատարեալ խաղաղութիւն պիտի վայելեն:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԵՆ

Միբելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաե՛ր Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԲՈՒ ԽՍՐԷԴ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԻՆՏԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 29 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2020 ԹԻԻ 48

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀՎԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 36.22-37.11: Ա. Թս. 4.1-11:
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 13.1-9

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 13.1-9

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ գոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասնութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելովամի մէջ եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին քան Երուսաղէմի բոլոր բնակիչները: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. Մարդ մը կար որ իր այգիին մէջ թզենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թզենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ տարին է, որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրե՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեռով թերես պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրե՛ գայն»:

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴԻԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն առաջնորդէ մեզ, որպէսզի արդարութեան քու ճամբաներէդ քալենք եւ քու ողորմութեամբդ՝ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը. որովհետեւ դո՛ւն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱԿԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐԳԷՆ
36.22--37.11**

Քեղկիայի որդի Եղիակիմը, որ ար-
փունի հազարապետն էր, հրովարտակ-
ներու փարտուղար Սոմնասը եւ Ասափի
որդի Յովաֆը, որ արձանագրութիւն
պահող փարտուղարն էր, իրենց վերար-
կունները պատած՝ եկան Եգեկիա թա-
գաւորին մօտ, եւ Սենեֆերիմի հրամա-
նատարին խօսքերը փոխանցեցին:

Եգեկիա երբ լսեց՝ իր հագուստները
պատոնեց, փուրձ հագաւ եւ ելաւ Տիրոջ
տանարը գնաց, եւ Եղիակիմ հազարա-
պետը, փարտուղար Սոմնասն ու տա-
նարի ֆահանգներէն ձեռքերը, բոլորն ալ
փուրձ հագած, դրկեց Ամոսի որդի
Եսայի մարգարէին ֆով, որպէսզի անոր
ըսեն. «Եգեկիա այսպէս կ'ըսէ. "Այսօր
սուգի, նախատիմֆի, կշտամբանֆի եւ
բարկութեան օր է: Ծննդական կնոջ
պէս՝ երկունքը բունք է մեզ, բայց ոյժ
չունինք ծնանելու: Թող ֆու Տէր
Աստուածդ լսէ, թէ ի՛նչ կ'ըսէ Ասորես-
տանի թագաւորին հրամանատարը, որ
իր տիրոջ կողմէ դրկուեցաւ կենդանի
Աստուածը նախատելու ա՛յն նախատա-
կան խօսքերով, որ ֆու Տէր Աստուածդ
լսեց: Արդ, հարցուր ֆու Տէր Աստու-
ծոյդ, ի՞նչ պիտի ըլլայ մնացողներու
վիճակը"»:

Երբ Եգեկիա թագաւորին ծառա-
ները Եսայիի ֆով եկան, Եսայի ըսաւ
անոնց. «Հետեւեալը ըսէ՛ք ձեր տիրոջ.
Այսպէս կ'ըսէ Տէրը. Մի՛ վախճար այն
խօսքերէն, որ լսեցիր եւ անոնցմով
Ասորեստանի թագաւորին պատգամա-
ւորները գիս նախատեցին: Ահաւասիկ
ես անոր հոգին պիտի խոովեմ
այնպիսի լուրով մը, որ ստանալուն
պէս իր երկիրը պիտի վերադառնայ եւ
հոն սուրով պիտի սպաննուի»:



**ՆԱՄԱԿԸ
ԹԵՍԱԿՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
4.1-11**

Այսպէս ուրեմն, եղբայրներ, մենք ձեզի
սորվեցուցինք, թէ ի՛նչպէս պէտք է ապրիլ
Աստուծոյ հանելի ըլլալու համար: Թէեւ
այդպէս կ'ապրիք արդէն, սակայն կը
խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անու-
նով կը թելադրենք, որ շարունակե՛ք
յառաջանալ ներկայ ձեր ընթացքին մէջ:
Գիտէք, թէ ի՛նչ պատւերներ տուինք ձեզի
Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աս-
տուծոյ կամքն է, որ դուք սրբուիք եւ
ամենեւին հեռու մնա՛ք պոռնկութենէ:
Ձեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ
ու պատուով ամուսնանայ: Կրֆոտ ցան-
կութիւններու անձնատուր մի՛ ըլլա՛ք
հեթանոսներուն պէս, որոնք գԱստուած
չեն ֆանչնար, կամ չըլլայ որ մէկը եղբօր
մը դէմ մեղանչէ անոր կինը յափըշ-
տակելով, որովհետեւ այդ բոլորին
համար Տէրը իր դատաստանին մէջ
անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն
ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Մի՛թէ
Աստուած մեր պղծալից կեանքը
շարունակելու՞ հրաւիրեց մեզ, թէ
սրբութեամբ ապրելու: Անշուշտ, թէ
սրբութեամբ ապրելու: Հետեւաբար ով,
որ սրբութեան այս պատուէրը
կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած
չ'ըլլար, այլ նոյնիմէն գԱստուած, որ իր
Սուրբ Հոգին կու տայ մեզի:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**Ս. ԹԱՂԷՆՍ ԵՒ
Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՆՍ
ԱՌԱՋԵԱԼՆԵՐՈՒՄ ՏՕՆ**

Ամէն տարի Դեկտեմբեր ամսուան
ընթացքին կը յիշատակուի Յիսուսի ա-
ռաջին աշակերտներէն՝ Ս. Թաղէնս եւ Ս.
Բարթողիմէնս առաքելներուն տօնը:
Անոնք Հայաստանի մէջ Քրիստոնէու-
թեան փարոզութիւնը սկսած են կատա-
րել առաջին դարէն սկսեալ, Յիսուսի
համբարձումէն ետք:

Հայաստանը այդ օրերուն կը նկատ-
ուէր կարեւոր եւ բազմամարդ երկիր: Ս.
Թաղէնսի եւ Ս. Բարթողիմէնսի կը վի-
ճակուի Հայաստանէն ներս Քրիստոնէ-
ութիւնը տարածելու դժուար գործը,
տրուած ըլլալով, որ այդ տարիներուն
հայ ժողովուրդը բազմաստուածեան
կրօն ունէր:

Ո՞Վ ԷՐ Ս. ԹԱՂԷՆՍ

Յիսուսի 12 աշակերտներէն մէկն է:
Յայտնի չէ, թէ երբ ծնած է, բայց նահա-
տակուած է իր փարոզական առաքե-
լութեան ֆամբուն վրայ շուրջ 46 թուա-
կանին:

Թաղէնս առաքել կը յաջողի ֆրիս-
տոնէութեան կրօնը տարածել հայոց
արֆունական պալատէն ներս ֆրիս-
տոնեայ մկրտելով Սանդուխտ կոյսը, որ
Սանատրուկ թագաւորին աղջիկն էր:
Թագաւորը կը փորձէ իր աղջիկը վերա-
դարձնել ֆուրմերու պաշտամունքին եւ
ձախողելով սպաննել կու տայ թէ՛ Սան-
դուխտ կոյսը, թէ՛ Թաղէնս առաքելը:
Մինչ այդ Արտագ գաւառի բնակչու-
թիւնը, հետեւած ըլլալով Ս. Թաղէնսի
փարոզութեան, անոր յիշատակին կը
հիմնէ Թաղէի վանքը շուրջ 66 թուա-
կանին, որ դարերու ընթացքին կը դառ-
նայ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոն-
ներէն մէկը:

Ո՞Վ ԷՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՆՍ

Բարթողիմէնս Յիսուսի 12 աշա-
կերտներէն մէկն էր: Անոր կը տրուի
նաեւ Նաթանայէլ անունը, որ կը նշա-
նակէ «Աստուծոյ Նուէր»:

Ան ֆրիստոնէութիւնը փարոզած է
Հնդկաստանի, Պարսկաստանի, Արաբ-
իոյ եւ Հայաստանի մէջ: 66 թուա-
կանին տեղի ունեցած է իր նահատա-
կութիւնը:

Բարթողիմէնս կը նկատուի Ս.
Թաղէնս առաքելին հետ Հայաստանի
մէջ ֆրիստոնէութեան առաջին փարո-
զիչը:

Առաքելալը Հայաստանի մէջ իր փա-
րոզական աշխատանքը սկսած է Գող-
թան գաւառէն, ապա Սիւնեաց, Արա-
րատեան եւ Վասպուրական նահանգ-
ներուն մէջ: Ան կը յաջողի նաեւ հայոց
արֆունի շրջանակներէն ներս ալ փա-
րոզութիւն կատարել: Քրիստոնեայ կը
մկրտէ Սանատրուկ թագաւորին ֆոյրը՝
Ոգուհին եւ հազարապետ Տերենտ-
իոսը: Հետեւանքը այն կ'ըլլայ, որ թա-
գաւորը սպաննել կու տայ թէ՛ ֆոյրը,
թէ՛ հազարապետը, թէ՛ առաքելը:

Հայ ժողովուրդը ի յիշատակ Ս.
Բարթողիմէնսին, չորրորդ դարուն
Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ
կը շինէ վանք մը, որուն չորս աւան-
դատուներէն մէկուն մէջ գոյութիւն
ունի տապանաքար մը, վրան արձա-
նագրուած՝ թէ հոն թաղուած է Ս. Բար-
թողիմէնս Առաքելը:

Վանքը ներկայիս կիսաւեր վիճակի
մէջ է:

Շնորհիւ Ս. Թաղէնս եւ Ս. Բարթո-
ղիմէնս առաքելներուն Հայաստան-
եայց մայր եկեղեցին **ԱՌԱՔԵԼԱԿԱՆ**
կը կոչուի Յիսուսի առաքելներու
նախձեռնութեամբ հիմնուած ըլլա-
լուն համար: